№ 94 Մայիսի 29 (Յունիսի 10) 1882 Մայիսի 29 (Յունիսի 10) № 94

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ. օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Դարձեալ խնդրում ենք „ՄՇԱԿԻ“ բաժանորդներից, որոնք մինչև այժմ չեն վճարել 1880, 1881 և ներկայ 1882 թվի բաժանորդագինը, շուտով հասցնել մեզ իրանց պարտքը։

Մի և նոյն ժամանակ խնդրում ենք օտարաքաղաքացիներին հասցէն փոխելու ժամանակ, ուղարկել մեզ երկու հատ 7 կոպէկանոց փոստային մարկա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաբլիսայից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Եգիպտոս։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մէլիքութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ

Մայիսի 25-ին

Ղարաբլիսայի թղթակցութիւններից արդէն յայտնի է լրագրիդ ընթերցողներին մեր հասարակութեան և անտառապետի մէջ ծագած անախորժ դէպքը, որի հետևանքի մասին գործի ընթացքը վաղ կերպարանք է խոստանում. որ կողմը արդար կը գտնվի, դժուար է մարգարէանալ. առ այժմ այս է յայտնի, որ անտառապետը իր անտառապահ մարտակիցներով, ամեն կողմ յայտարարութիւններ է ուղարկում, հաւատացնելով, իբր թէ զարաքիլիսեցիք կամեցել են սպանութեան փորձ փորձել։ Այդ հիման վրա պրոկուրորը, քննիչը, դատաւորը և կնեազ Գուրամօվը 3 օր քննում էին, որից յետոյ անմիջապէս 12 մարդ բռնեցին և ուղարկեցին Ալէքսանդրապօլի բանտը։ Գիւղացիք թէ գրաւոր և թէ բերանացի գանգատներ են արել։ Լրագրական զզրդիչը դեռ ես արձագանք գրտնելու բաղդ չէ ունեցել։ Հասարակութիւնը ամեն խօսակցութեան մէջ՝ բանտարկեալների ցաւն է լաց լինում. դրանց մէջ այնպիսին կայ, որ 7—8 մանուկների ծնող լինելով, այժմ տունը կառավարող ոչ ոք չը կայ բանտարկեալներին ահա 17 օր է. գործերի ընթացքը առ այժմ անգոյն դրութեան մէջ է. յոյս ունենք, որ արդարադատ իշխանութիւնը մեզ տարակուսանքներից փարատելու համար, գործի ընթացքին շուտով մի կերպ վերջ կը տայ։ Հաստատում են, որ շուտով Երևանից մի նոր քննիչ է գալու այս գործերը նորից մանրամասնաբար քննելու համար. մեծայոյս ենք, որ քննութիւնը անաչառ կը լինի։—Ասում են, որ անտառապետը մտադիր է օտպուսկ գնալ։—Այս խռովութիւնների առթիւ, տանուտէրին պաշտօնանկ արին. իսկ թէ նորից արժանանալու է իր պաշտօնին, այդ հարց է. մինչև անգամ կասկածում են, որ մի գուցէ վերջինս էլ նոյն բաղդին մատնվի։

Զարմանալի բան. տեղից շարժվողը իր գալլա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

XV.

Իբրահիմ-խանը սկզբում պահպանեց իր հօր կապած դաշնադրութեան պայմանները հայոց մէլիքների հետ, որովհետև դեռ թոյլ էր և բոլորովին չէր ամրացած իր տեղի մէջ։ Բայց յետոյ մի քանի հանգամանքներ նպաստեցին նրան զօրանալ և հայոց մէլիքների հետ բռնութեամբ վարվել։

Այդ հանգամանքներից մէկը այն էր, որ Վարանդայի Մէլիք-Շահնազարը, այդ հայրենիքի դաւաճանը, որ իր Շուշի բերդը տալով Փանահ-խանին, նրան ուժ և զօրութիւն տուեց, որը իր անջակցութեամբ այնքան բարձրացրեց հասարակ Ջուանշիրցի խաշնարածին, որ Ղարաբաղի հայ իշխանութիւնների քայքայման պատճառը դարձաւ,—այժմ մի և նոյն Մէլիք-Շահնազարը, Փանահ-խանի մեռնելուց յետոյ, իր վաղեմի բարեկամութիւնը նրա որդու հետ պահպանելու համար, կատարեց մի այլ ամօթալի գործ։ Նա իր աղջկան, գեղեցիկ Հիւրի-զաղին տուեց Իբրահիմ-խանին կնութեան։ Մէլիք-Շահնազարի այդ վարմունքը սաստիկ վրդովեցրեց հայոց միւս մէլիքներին, մանաւանդ Տիզակի Մէլիք-Եսայուն, որովհետև Հիւրի-զաղը իր աղջկանից ծնված էր *)։

Այդ դէպքը առիթ տուեց սարսափելի կռիւների Մէլիք-Շահնազարի և Մէլիք-Եսայու մէջ, որոնք տևեցին մի քանի տարիներ։ Մէլիք-Շահնազարը միացաւ խաչէնի Մէլիք-Միրզախանի հետ, և երկուսը միասին յարձակումներ էին գործում Մէլիք-Եսայու Տող բերդի վրա։ Մի ճակատամարտի մէջ Մէլիք-Միրզախանը գերի բռնվեցաւ։ Մէլիք-Եսային **) իր սուրը բռնելով նրա գլխի վրա, արտասանեց հետևեալ խօսքերը. «դու, Միրզախան, չատ նման ես այն դաւաճանին, որին կոչում էին Մեհրուժան։ Նա ուրացաւ մեր կրօնը, նա պարսից ձեռքում գործիք եղաւ և սկսեց մեր հայրենիքը աւերակ դարձնել։ Նրան, որպէս վարձատրութիւն իր կատարած չարագործութիւնների համար, խոստացել էին Հայաստանի թագը։ Մի ճակատամարտի մէջ նա ևս քեզ նման գերի ընկաւ հայերի ձեռքը։ Այդ միջոցին հայոց զօրավարներից մէկը, որին կոչում էին Սմբատ Բագրատունի, կրակի մէջ չիկացրած շամփուրին պսակի ձև տուեց, և դնելով նրա գլխի վրա, ասաց. «դու ցանկանում էիր հայոց թագաւոր լինել, ահա ես, իբրև ասպետ և թագադիր, պսակում եմ քեզ»... Բայց դու դնել Մեհրուժանի չափ փառասիրութիւն չունէիր. դու միայն մի ցած դաւաճան էիր, որ առօրեայ ընչին փառքի համար թուրք խանի և Մէլիք-Շահնազար չարագործի արքանեակը դարձար։ Քեզ հետ պէտք է վարվել ինչպէս մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպէս զի միւս արարածները նրա կծոտելուց չը վարակվին»... Վերջին խօսքերի հետ նա իջեցրեց իր սուրը (1775)։

Մէլիք-Միրզախանի փոխարէն Իբրահիմ-խանը խաչէնի կառավարիչ կարգեց նրա որդի Մէլիք-Ալլահվերդուն, որը հօր նման հաւատարիմ մնաց թուրք խանին։ Դրանով կռիւը աւելի բորբոքվեցաւ։ Եւ որովհետև կռիւների սկզբնապատճառը գեղեցիկ Հիւրի-զաղն էր, այդ պատճառով Իբրահիմ-խանը նոյնպէս խառնվեցաւ կռիւների մէջ, ի հարկէ, բռնելով Մէլիք-Շահնազարի կողմը։

Մէլիք-Եսային միայնակ պիտի պատերազմէր իր երեք թշնամիների դէմ, որպէս էին՝ Իբրահիմ-խանը, Մէլիք-Շահնազարը և Մէլիք-Ալլահվերդին։ Նրա հզօր դաշնակիցները այլ ևս չը կային։ Մենք յետոյ կը տեսնենք, որ Գիւլիստանի Մէլիք-Բէգլարեան Մէլիք-Իսսուրը վախճանվեցաւ (1775) և նրա որդին, Մէլիք-Աբով III-ը, աւելի զբաղված էր իր երկրի կառավարութիւնով, քան թէ պատերազմներով։ Մէլիք-Իսսուրից հինգ տարի յետոյ 1780 թվին վախճանվեցաւ Ջրաբերդի Մէլիք-Խաչատուրեան Մէլիք-Աթամը, այն սարսափելի մարդը, որից դողում էր Իբրահիմ-խանը։ Հանգուցեալի մահից յետոյ յաջորդեց որդին՝ Մէլիք-Մէջլումը։ Այդ երիտասարդը թէ հօր քաջութիւնը և թէ նրբութիւնը մեր դլխին է գործ դնում։ Ա. գիւղացի մէկը, որ ուղիղ հայերէն խօսել չը գիտէ, կեղծ եւրոպականութեան տակ ծածկված, գիւղումս սուտ բժշկութիւններ է անում. անմիտ գիւղացիք էլ հիւանդանոցի դիպլոմատոր բժիշկները թողած՝ դրան են դիմում, որը վիզիտը կանխիկ պահանջելով, բժշկելը նիսիա է թողնում. մի հարցնող լինի թէ, պարոն, եթէ դու բժիշկ ես, ինչու անկողնում անքալուղ ժամանակը զալլաքին հրաւիրեցիր և 3—4 բաժակ արիւն քամել տուիր քեզնից. եթէ բժիշկ էիր, թող անձդ բժշկէիր. այս դեռ բաւական չէ. աղքատ հիւանդներին իբր թէ բժշկելու համար, երբ հարկաւոր դեղը իր մօտ չէ լինում, գնում է ապտեկից առնում և 50 կոպէկանոց դեղը 15, 25 կոպէկի ծախում նրանց վերա. ահա ձեզ անխիղճ և կեղտոտ մարդ. երեի արիւն ծծող տղրուվները քիչ էին՝ դու աւելացար։ Զենք ուրանում, որ ճիճու սատկեցնելու մէջ բաւական հմուտ ես. բայց բարակացաւոտները, ներքին հիւանդութիւն ունեցողները քո ինչ բանն է։ Դու ինքդ ես ասել թէ, «բժշկները վռնդեցին ինձ Թիֆլիսից»։

Անցեալ տարի պ. Պռօչեանցը ուսումնարանի կարիքները թեթևացնելու համար, եկամտի մի քանի աղբիւրներ գտաւ և յանձնեց տանուտէրի ու հողարարձուների անօրէնութեան։ Իսկ վերջիններիս կարելի է միտներին էլ չի լինի։

Մեր ուսուցիչների շնորհիւ, այժմ զղրոցի հայաթը կատարելապէս ազատ է՝ նախկին դրութեան պէս հասարակաց երեխեկ և աղբանոց լինելուց։ Ցիշեալ ժրաջանների շնորհիւ, հայաթի մի մասը զարդարված է պտղատու և վայրի ծառերով. մի քանի տարուց յետոյ, ծառաստանը ուսուցիչների և աշակերտների համար կատարեալ ճեմելիք կը լինի։

Թէև այժմ դարնանային ամիսներ են, սակայն սոյն ամիսներում ևս ձեան ենք հանդիպում. իսկ մայիսի սկզբից մինչև այսօր՝ օրը 4-5 անգամ տեղացող յորդարաց անձրևներից անտառները և դաշտերը կատարեալ դրախտի կերպարանք են ստացել. բայց մենք դեռ բաղդ չենք ունեցել դրանց անուշահոտ բուրմունքները ծծելու. մի խօսքով խոնաւութեան դերի ենք դարձած։

Կենսական պիտոյքները անհամեմատ ցածր են անցեալ տարիներից. ոչ միայն Ղարաքիլիսան, այլ և ամբողջ Փամբակը ցնծում է արժանութեան կողմից ուրախութեան աղաղակներով. մի խօսքով այս տարվայ արաերը առատութիւն են խոստանում։

Փառք Աստուծոյ, երկու ամիս է, որ կարմրուկը համարեա վերացած է գիւղից, այն ինչ «Մեղուի» թղթակիցը հակառակն է ասում. չը գիտեմ խմբագիրն է քնից նոր զարթել թէ՝ նամակագիրը (նամակը կարծես ձմրան ամիսներից գրված լինի), և որ զարմանալին է, նամակագիրն ասում է թէ, «գլխաւորապէս աղքատներից են մեռնում» (մինթէ). կարելի է, կարմրուկը վախում կը լինի հարուստներից. չես յիշում արդեօք մի հարուստ մարդու երկու արու զաւակների մի օրվայ մէջ մեռնելը, նոյնպէս և շատերինը, որոց յիշելը աւելորդ եմ համարում. էհ, դուք այլոց անսիրտը սուտ և չափազանցութիւն կը համարիք, իսկ ձերը ինչպէս լինի «եօլայ» կերթայ։

Փամբակեցի

չատ նման ես այն դաւաճանին, որին կոչում էին Մեհրուժան։ Նա ուրացաւ մեր կրօնը, նա պարսից ձեռքում գործիք եղաւ և սկսեց մեր հայրենիքը աւերակ դարձնել։ Նրան, որպէս վարձատրութիւն իր կատարած չարագործութիւնների համար, խոստացել էին Հայաստանի թագը։ Մի ճակատամարտի մէջ նա ևս քեզ նման գերի ընկաւ հայերի ձեռքը։ Այդ միջոցին հայոց զօրավարներից մէկը, որին կոչում էին Սմբատ Բագրատունի, կրակի մէջ չիկացրած շամփուրին պսակի ձև տուեց, և դնելով նրա գլխի վրա, ասաց. «դու ցանկանում էիր հայոց թագաւոր լինել, ահա ես, իբրև ասպետ և թագադիր, պսակում եմ քեզ»... Բայց դու դնել Մեհրուժանի չափ փառասիրութիւն չունէիր. դու միայն մի ցած դաւաճան էիր, որ առօրեայ ընչին փառքի համար թուրք խանի և Մէլիք-Շահնազար չարագործի արքանեակը դարձար։ Քեզ հետ պէտք է վարվել ինչպէս մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպէս զի միւս արարածները նրա կծոտելուց չը վարակվին»... Վերջին խօսքերի հետ նա իջեցրեց իր սուրը (1775)։

Մէլիք-Միրզախանի փոխարէն Իբրահիմ-խանը խաչէնի կառավարիչ կարգեց նրա որդի Մէլիք-Ալլահվերդուն, որը հօր նման հաւատարիմ մնաց թուրք խանին։ Դրանով կռիւը աւելի բորբոքվեցաւ։ Եւ որովհետև կռիւների սկզբնապատճառը գեղեցիկ Հիւրի-զաղն էր, այդ պատճառով Իբրահիմ-խանը նոյնպէս խառնվեցաւ կռիւների մէջ, ի հարկէ, բռնելով Մէլիք-Շահնազարի կողմը։

Մէլիք-Եսային միայնակ պիտի պատերազմէր իր երեք թշնամիների դէմ, որպէս էին՝ Իբրահիմ-խանը, Մէլիք-Շահնազարը և Մէլիք-Ալլահվերդին։ Նրա հզօր դաշնակիցները այլ ևս չը կային։ Մենք յետոյ կը տեսնենք, որ Գիւլիստանի Մէլիք-Բէգլարեան Մէլիք-Իսսուրը վախճանվեցաւ (1775) և նրա որդին, Մէլիք-Աբով III-ը, աւելի զբաղված էր իր երկրի կառավարութիւնով, քան թէ պատերազմներով։ Մէլիք-Իսսուրից հինգ տարի յետոյ 1780 թվին վախճանվեցաւ Ջրաբերդի Մէլիք-Խաչատուրեան Մէլիք-Աթամը, այն սարսափելի մարդը, որից դողում էր Իբրահիմ-խանը։ Հանգուցեալի մահից յետոյ յաջորդեց որդին՝ Մէլիք-Մէջլումը։ Այդ երիտասարդը թէ հօր քաջութիւնը և թէ նրբութիւնը մեր դլխին է գործ դնում։ Ա. գիւղացի մէկը, որ ուղիղ հայերէն խօսել չը գիտէ, կեղծ եւրոպականութեան տակ ծածկված, գիւղումս սուտ բժշկութիւններ է անում. անմիտ գիւղացիք էլ հիւանդանոցի դիպլոմատոր բժիշկները թողած՝ դրան են դիմում, որը վիզիտը կանխիկ պահանջելով, բժշկելը նիսիա է թողնում. մի հարցնող լինի թէ, պարոն, եթէ դու բժիշկ ես, ինչու անկողնում անքալուղ ժամանակը զալլաքին հրաւիրեցիր և 3—4 բաժակ արիւն քամել տուիր քեզնից. եթէ բժիշկ էիր, թող անձդ բժշկէիր. այս դեռ բաւական չէ. աղքատ հիւանդներին իբր թէ բժշկելու համար, երբ հարկաւոր դեղը իր մօտ չէ լինում, գնում է ապտեկից առնում և 50 կոպէկանոց դեղը 15, 25 կոպէկի ծախում նրանց վերա. ահա ձեզ անխիղճ և կեղտոտ մարդ. երեի արիւն ծծող տղրուվները քիչ էին՝ դու աւելացար։ Զենք ուրանում, որ ճիճու սատկեցնելու մէջ բաւական հմուտ ես. բայց բարակացաւոտները, ներքին հիւանդութիւն ունեցողները քո ինչ բանն է։ Դու ինքդ ես ասել թէ, «բժշկները վռնդեցին ինձ Թիֆլիսից»։

Անցեալ տարի պ. Պռօչեանցը ուսումնարանի կարիքները թեթևացնելու համար, եկամտի մի քանի աղբիւրներ գտաւ և յանձնեց տանուտէրի ու հողարարձուների անօրէնութեան։ Իսկ վերջիններիս կարելի է միտներին էլ չի լինի։

Մեր ուսուցիչների շնորհիւ, այժմ զղրոցի հայաթը կատարելապէս ազատ է՝ նախկին դրութեան պէս հասարակաց երեխեկ և աղբանոց լինելուց։ Ցիշեալ ժրաջանների շնորհիւ, հայաթի մի մասը զարդարված է պտղատու և վայրի ծառերով. մի քանի տարուց յետոյ, ծառաստանը ուսուցիչների և աշակերտների համար կատարեալ ճեմելիք կը լինի։

Թէև այժմ դարնանային ամիսներ են, սակայն սոյն ամիսներում ևս ձեան ենք հանդիպում. իսկ մայիսի սկզբից մինչև այսօր՝ օրը 4-5 անգամ տեղացող յորդարաց անձրևներից անտառները և դաշտերը կատարեալ դրախտի կերպարանք են ստացել. բայց մենք դեռ բաղդ չենք ունեցել դրանց անուշահոտ բուրմունքները ծծելու. մի խօսքով խոնաւութեան դերի ենք դարձած։

Կենսական պիտոյքները անհամեմատ ցածր են անցեալ տարիներից. ոչ միայն Ղարաքիլիսան, այլ և ամբողջ Փամբակը ցնծում է արժանութեան կողմից ուրախութեան աղաղակներով. մի խօսքով այս տարվայ արաերը առատութիւն են խոստանում։

Փառք Աստուծոյ, երկու ամիս է, որ կարմրուկը համարեա վերացած է գիւղից, այն ինչ «Մեղուի» թղթակիցը հակառակն է ասում. չը գիտեմ խմբագիրն է քնից նոր զարթել թէ՝ նամակագիրը (նամակը կարծես ձմրան ամիսներից գրված լինի), և որ զարմանալին է, նամակագիրն ասում է թէ, «գլխաւորապէս աղքատներից են մեռնում» (մինթէ). կարելի է, կարմրուկը վախում կը լինի հարուստներից. չես յիշում արդեօք մի հարուստ մարդու երկու արու զաւակների մի օրվայ մէջ մեռնելը, նոյնպէս և շատերինը, որոց յիշելը աւելորդ եմ համարում. էհ, դուք այլոց անսիրտը սուտ և չափազանցութիւն կը համարիք, իսկ ձերը ինչպէս լինի «եօլայ» կերթայ։

Փամբակեցի

*) Մէլիք-Շահնազարը ունէր մի քանի կնիկներ. նրա Սօնա անունով կինը Հիւրի-զաղի մայրն էր և Մէլիք-Եսայու աղջիկը։

**) Մէլիք-Եսային կարդացած մարդ էր. նա բաւական հմտութիւններ ունէր հայոց, պարսից և արաբական դպրութեան մէջ։

*) Դրանցից մէկն էր Գիւլ-եաթաղ գիւղի Միսայէլ-բէկը, միւսը նրա փեսայ Յակոբ իւզբաշին։

**) Անունները յայտնված չեն այն գրչագիր պատմութեան մէջ, որից մենք քաղում ենք այդ անցքը։

***) Նրա գերեզմանը գտնվում է իր բերդի եկեղեցու զատում. տապանաքարի վրա կարդացվում է հետևեալ արձանագրութիւնը.

«Այս է տապան քաջ իշխանին, Սայի անուն մեծ մէլիքին. կարդեալ իշխան Նադիր-շահին. եռեսուն երեք ամ տիրեաց Տիզակ երկրին. դքաջութիւն և դյաղթութիւն՝ արար բազում ձեռամբ նորին։ Ընդ անօրինաց էր հակառակ. ի սուր մաչէր զթշնամին։ Ինքն պարթև և զօրաւոր, քան զառաջինսն էր առաւոր։ Մինչ վացսուն և վեց ամաց եղեալ, ի յաշխարհէ վերափոխեալ»։

«Վախճանեցաւ թվիսն ռ. մ. լ. (1781).

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 մայիսի

Այս նամակովս ներկայացնելով ձեզ 18 բուրլ, որը հաւաքված է պ. Արտաշէս Օհանջանեանցի առաջարկութեամբ մի մանաւոր ընկերութեան մէջ յօգուտ Դարախանա փողոցում փուլ եկած չինութեան աւերակների տակ սպանված 7 մշակների որբացած զերդաստաններին, խոնարհաբար խնդրում եմ կարգադրէք յանձնել այդ փողերը ում հարկն է: Այդ փողերը նուիրել են հետեւեալ պարոնները. Աղէքսանդր Աղէքսանդրեան 3 ր., Արշակ Գրիգորեանց 3 ր., Արտաշէս Օհանջանեանց 2 ր., Ն. Դ. 2 ր., Կարապետ Մաղաքեանց 2 ր., Մ. Ն. 2 ր., Յովհաննէս Առվանեանց 2 ր. և Զ. Ա. 2 ր.:

Զարմայր Առվանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայիսի 27-ին խաղացվեցաւ Արծրունու թատրոնում հանգուցեալ բժիշկ Տէր-Գրիգորեանի «Նինոի նշնվիլը» պիէսան: Զը գիտենք ինչին վերաբերենք, որ պիէսայի այն տեղերը, որտեղ հեղինակը ներկայացնում է մեր հասարակութեան ամենաանբարոյական կողմերը, փոխանակ զզուանք, նոյն իսկ սարսափ զգալու, թատրոնի հասարակութիւնը ծիծաղում է: Պակասութիւնը մասամբ խաղալու ձևի մէջն էր գուցէ, բայց երևի գլխաւորապէս նոյն իսկ հեղինակութեան մէջն է: Դժբաղդաբար հանգուցեալ Տէր-Գրիգորեան բժիշկը ուզում էր միշտ իր պիէսաներում միացնել ամենաողբերգական տեղերը անընդհատ հանաքների հետ: Հասարակութիւնը մոլորված է լինում, չը գիտէ ծիծաղի թէ տխրի: Երևակայեցէք ձեզ որ պիէսան վերջանում է դրանով, որ մի սարսափելի անբարոյական ծեր մարդ նշանվում է մի դիակի հետ,—իսկ հասարակութեան ծիծաղի չափ ու սահման չը կայ: Ինչ կարծիք կարող էք կազմել այդ տեսակ հասարակութեան մասին: Բայց բոլորը հաւատացած էին որ պօլսեցիների մշական խումբի երկու տարվայ երևելի խաղը կրթեց մեր հասարակութեան գեղարուեստական ճաշակը: Իսկ եթէ մեզ կապացուցանեն որ Տէր-Գրիգորեանի պիէսան անպիտան, կամ դերասանների խաղը վատ էր,—ուրեմն հասարակութիւնը պէտք է զղջանքով զուրս գար թատրոնից և ոչ թէ ուրախանար, ծիծաղէր ու ծափահարէր:

—

Մայիսի 27-ին խաղացած «Նինոի նշնվիլը» պիէսայում Նինոի դերը տիկին Փաշայեան-Տէր-Գրիգորեան չը կարողացաւ խաղալ հիւանդութեան պատճառով, այլ այդ դերը խաղաց օրիորդ Վարդուհին:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Տիգրան Նաւասարդեանից նրա «Հայ-ժողովրդական հեքիաթների» ժողովածուի առաջին գիրքը: Տպված է Վաղարշապատում, Էջմիածնի տպարանում այս 1882 թվին: Հեքիաթների ընտրութիւնը լաւ է և լեզուն էլ, որով նրանք գրված են, բուն երևանեան բարբառը, շատ մաքուր կերպով է պահպանված:

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այս տեղ հացաբոյսերը այս տարի լաւ հունձ չեն խոստանում: Ասում են աշնան ցրտերը ցրտահար են արել մատաղ ցանքերի արմատները: Բայց, այնու ամենայնիւ, գաւառումս էժանութիւն է, ալիւրի պուդը արժէ 60 կոպէկ, գարին 25 կոպ., հաւկիթը 6 հատ արժէ 5 կոպէկ»:

—

ՓՕԹԻՑ մեզ գրում են, որ մայիսի 22-ին Սև ծովում եղած սարսափելի փոթորիկների ժամանակ ծովի ալէկոծութիւնը այն աստիճան սաստիկ էր, որ բացի «Կօբչիկ» չոգենաւից դարձեալ ուրիշ չորս, աւելի փոքր նաւեր Փօթիի նաւահանգստից ցամաք նետվեցան:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են: «Ռուս աղանդաւորների և առհասարակ նրանց բարձր բարոյականութեան մասին ռուս մամուլը խօսում է մեծ գովասանքով: Կարելի է որ Ռուսաստանի ներքին գաւառներում այսպէս է, բայց բարոյականութիւնը մակերևոյթի նոյն բարձրութեան վրա անընդհատ պահպանելու համար հարկաւոր է լուսաւորութիւն, որից եթէ զուրկ է մարդկային հասարակութիւնը, նրա բարը ու վարքը սկսում է կոպտանալ և խանդարվել: Նոյնը պատահել է և մեր կողմերի դուխաբօրների հետ: Նրանց ծերերի մէջ դեռ ես կան բարձր բարոյականութեան տէր անձինք, բայց նրանց նոր սերունդը նկատելի կերպով զանազանվում է հինից: Մանաւանդ գաւառիս ութ դուխաբօրական գիւղերից Տրօիցկայա, Ցամբօվկա և Թափարավան (Բօղիսօվկա) իրանց բարը ու վարքով աւելի յետ են մնացել իրանց աղանդակից միւս գիւղացիներից: Դուխաբօրների մէջ սկսում է երևալ արդէն հարբեցողութիւնը, գողութիւնը և մարդասպանութիւնը: Անցեալները, ինչպէս լսեցինք, դուխաբօրների մի գիւղում սպանել են մի հայ երիտասարդին: Սպանութեան մանրամասնութիւններ դեռ անյայտ են:»

—

Մեզ գրում են Ախալքալաքից, որ այդտեղ գողութիւններ սկսել են բազմանալ: Օրերումս, գրում է մեզ թղթակիցը, մի ախալքալաքցի, իր աներոջ տանից, սրա բացակայութեան ժամանակ գողացել է մնդուկից թանգագին ոսկեղէն զարդեր և 40 բուբլ փող ու անյայտացել:

—

Մեզ գրում են ԱՐԴԱՀԱՆԻՑ որ ռուս-թիւրքաց սահմանի վրա քիւրդ աւազակների մի խումբ է երևացել:

—

ԲԷԼԻ-ԿԼԻԻՋԻՑ մեզ հաղորդում են: «Թիֆլիսի կօնսիստօրիայից ուղարկված քննիչը այժմ այստեղ է: Վստահութեամբ կարելի է ասել որ քննիչը ոչինչ չէ անում և անգործ է անցնում այստեղ իր բոլոր օրերը: Զարմանալի է թէ ինչի այս տեսակ անհոգատ, անտարբեր և անընդունակ մարդիկ է ուղարկում մեր հոգևոր իշխանութիւնը տեղական քահանաների գործված գեղծումները, ի վնաս խեղճ ժողովրդի, նրանց կատարած չընչաս ու անհրաման պակներ և այլ ծանրակշիռ հարցեր քննելու համար:»

—

Ոչ ոք իրան այնքան չէ հակասում, որքան յեսադէմները: Շատ տարիներ սրանից առաջ Ակսակով, նոյն Ակսակով, որ այժմ «Русь» լրագիր է հրատարակում, մի զրուածք է հրատարակել հրէաների մասին, որտեղ մեծ գովասանքով էր խօսում հրէական ցեղի վրա և ցոյց էր տալիս հրէաների բերած օգուտները Ռուսաստանին: Իսկ այժմ նոյն մարդն է որ կարծում է թէ հարկաւոր է ջարդել հրէաներին, և ջարդելով նրանց ռուսաց ժողովուրդը բարձրացնում է իր ազգային ոգին: Հրէական օրգանները «Разсвѣтъ», «Восходъ» և «Русскій Еврей» անդադար հարց են առաջարկում Ակսակովին թէ ինչպէս պէտք է բացատրել նրա առաջվայ հակադրական գաղափարները դէպի հրէական ցեղը և նրա այժմեան անճոռնի մտքերը, ինչպէս պէտք է բացատրել այդ հրէշաւոր հակասութիւնը: Բայց Ակսակով լուռ է մնում, ոչինչ չէ պատասխանում իրան առաջարկված հարցերին:

—

Ասում են որ մայիսի 26-ին և 27-ին Ռուսաստանից փոստի չը ստացվելու պատճառը Վլադիկավկասեան երկաթուղու Ալասվերդ է սաստիկ անձրևներից:

—

Տէր Եղնիկ քահանայ Երզնկեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը: Մամուլի տակ է և մինչև սեպտեմբեր ամիսը լոյս կը տեսնի մեր աշխատասիրած «Զայնագրեալ ազգային երգարանը» հայ դպրոցների համար: Երգարանը պարունակելու է իր մէջ 110 ընտիր և գործածական երգեր:

—

ԹԻՖԼԻՍԻ նահանգի ազնվականութիւնը իր ուներցած ընդհանուր ժողովի վերջին նիստի մէջ վճռեց խնդրել կառավարութենից մոյնել վրաց լեզուի դասաւանութեան պարտադիր լինելը թէ վրաց գիւղական դպրոցներում և թէ ուղղափառ հոգևոր սեմինարիայում ու պետական միջնակարգ դպրոցներում: Ժողովի մէջ հայ ազնվականներից մէկը նկատեց որ ոչինչ ընդդէմ չունի որ վրաց տարրական, գիւղական դպրոցներում և սեմինարիայում մացնվի վրաց լեզուն, բայց եթէ ազնվա-

---

Բայց Մելիք-Բէգլարի սպանման մէջ կար մի ամբողջ ոսման:

Մելիք-Բէգլարը ամուսնացած էր Վարանդայի Մելիք-Շահնազարի դստեր Ամարնանի (Մարիամի) հետ: Բացի օրինաւոր կնոջից նա պահում էր մի սիրուհի Բալա անունով:

Մինչև այսօր, երբ ուղևորը անցնում է Գիւլիստանի խարխափուտ գիւղից և մտնում է նոյն անունով ձորի մէջ, ճանապարհի աջ կողմում ցոյց են տալիս մի հին այգի: Անտառային ծառերը աճելով, խառնվել են պտղատու ծառերի հետ և այդու վաղեմի գեղեցկութիւնը ծածկվել է վայրենի մացառների տակ: Այդ տեղին կոչում են Մելիք-Բէգլարի այգի: Այստեղ յատկապէս շինել տուած գեղեցիկ ամարանոցում ապրում էր իշխանի սիրուհին: Ամարանոցի աւերակներն են մնացել այժմ:

Ամուսնի այդ տեսակ վարմունքը չէր կարող չը գրգռել նրա օրինաւոր կնոջ, Ամարնանի, խանդոտութիւնը: Այդ կինը, ինչպէս վերևում յիշեցի, Վարանդայի Մելիք-Շահնազարի աղջիկն էր: Իր հօր նման միջոցների մէջ ընտրութիւն անել չը գիտէր նա. վաղուց մտածում էր վրէժխնդիր լինել Բալայից: Նա ընտրեց հէնց այն գիշերը, երբ իր ամուսինը զբաղված էր պատերազմական պատրաստութիւններով, իսկ առաւօտեան պէտք է կռուելու գնար: Նա կաչառեց իրանց ծառաներից մէկին, որ կոչվում էր Լալա, և ուղարկեց իր ախոյանուհուն սպանելու համար: Եղեռնագործութիւնը կատարելու համար մի այլ զէնքի կարօտութիւն չը կար, ասում են՝ գեղեցիկ կնոջ մազերի հիւսերը այնքան երկար էին, որ չարագործը փաթաթեց նրա պարանոցով և իր մազերով իրան խեղդեց: Մարմինը ձգվեցաւ հորի մէջ:

Առաւօտեան հէնց այն բոպէում, երբ Մելիք-Բէգլարը պատրաստվում էր նստել ձին, որ գնայ կռուելու, նրան լուր տուին, թէ Բալան սպանված է: «Երբ կը վերադառնամ պատերազմից, ես կիտեմ, թէ ինչ կանեմ սպանողներին»... ասաց նա և գնաց:

Մելիք-Բէգլարի խստասրտութիւնը յայտնի էր եղեռնագործին: Նա հասկացաւ, որ մելիքը ամեն հնարներ գործ կը դնէր երևան հանելու սպանութիւնը, և այն ժամանակ ոչ միայն իրան մահով կը պատժէր, այլ իր ամբողջ ընտանիքը սրից անց կը կացնէր: Երկիւղը նրան մի յանցանքից մի աւելի մեծ յանցանքի մէջ ձգեց: Նա հետևեց մելիքին, որպէս նրա թիկնապահներից մէկը, պատերազմի դաշտը: Կռիւի խառնվութեան ժամանակ թուփերի միջից անցաւ հրացանի գնդակը և մելիքին ցած գլորեց: Ի հարկէ, այն խառնաշփոթութեան մէջ ոչ ոք չէր կարող ստուգել, թէ գնդակը արդեօք մի որ և իցէ լեզգու հրացանից արձակվեցաւ, թէ մելիքի անձնական թիկնապահից:

Մելիք-Բէգլար II-ի մահից յետոյ նրա որդի Ցրէյդունը անչափահաս լինելով, Գիւլիստանի կառավարութիւնը անցաւ հանգուցեալի եղբայր Աբով III-ի ձեռքը: Այդ Աբովը իր նախնի միւս Աբովների նման, նոյնպէս յայտնի եղաւ որպէս մի քաջ պատերազմող: Դրա կառավարութեան օրերում, որպէս պիտի տեսնենք, կատարվեցան Ղարաբաղի բախտաւոր և ամենաղժբախտ անցքերը:

Եւ այսպէս, Գիւլիստանի Մելիք-Իսաբը մեռաւ. նրա որդին Մելիք-Բէգլարը սպանվեցաւ. Տիզակի Մելիք-Եսային Իբրահիմ-խանի խաբէութեանը զոհ դարձաւ. Ջրաբերդի Մելիք-Աթամը մեռաւ: Նշանաւոր, փորձված մարդիկը անհետացան, մնացին դիւրազգիւռ, տաքարիւն երիտասարդները...

Մնացած մելիքների մէջ Իբրահիմ-խանը աւելի երկիւղ ունէր Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեան Մելիք-Մէջլումից: Այդ երիտասարդը իր հօր՝ Մելիք-Աթամի նման ամենակատաղի թշնամի էր Շուշի բերդի մահմեդական բռնակալներին: Նրան ոչնչացնելու համար Իբրահիմ-խանը հետևեց իր հօր Փանահ-խանի քաղաքականութեանը: Այդ խորամանկ ջուանշիրցին, ինչպէս իր տեղում տեսանք (XI գլ.) խաչէնի Հասան-Ջալալեան մելիքների իշխանութիւնը թուլացնելու համար, ստեղծեց այնտեղ (Խնդիրիստան գիւղում) մի նոր մելիքութիւն՝ Մելիք-Միրզախանեանների տունը, որոնք ոչ սակաւ քան մահմեդականները վնասեցին Ղարաբաղի հայկական իշխանութիւնների քայքայմանը: Այժմ Իբրահիմ-խանը, իր հօր օրինակին հետևելով, Ջրաբերդի Մելիք-Իսրայէլեանների իշխանութիւնը թուլացնելու համար, մտածեց ստեղծել այնտեղ մի նոր մելիքութիւն: Այստեղ Գիւլեաթաղ գիւղում ապրում էին Ալլահվերդի իւզբաշու ժառանգները: Դրանց հայրը ծառայում էր Մելիք-Աթամի մօտ, իսկ ժառանգները ծառայում էին Մելիք-Աթամի որդի Մելիք-Մէջլումի մօտ: Իբրահիմ-խանը կանչեց իր մօտ Ալլահվերդի իւզբաշու որդի Միսայէլ-բէկին, յայտնեց նրան, եթէ մի կերպով Մելիք-Մէջլումին կը ոչնչացնէ, ինքը խոստանում է նրան օգնել, որ ամբողջ Ջրաբերդի վրա մելիք դառնայ: Միսայէլ բէկը հրապուրված խանի խոստմունքով, համաձայնվեցաւ կատարելու նրա ցանկութիւնը:

Միսայէլ-բէկը իր փեսայ Ցակոբ իւզբաշուն *) իր հետ առնելով, գնաց Մելիք-Մէջլումի մօտ իբրև հիւր: Մելիքը այդ ժամանակ գտնվում էր իր սեպհական ամարանոցում, Թարթար գետի ափի մօտ, Ղաղարիս կոչված տեղում **): Նա առանց կասկածանքի ընդունեց հիւրերին, որովհետև մէկը իր գիւղերի կառավարիչն էր, իսկ միւսը նրա փեսան:

Ընթրիքից յետոյ, երբ հիւրերը առանձնացան իրանց համար պատրաստված սենեակում քնելու, երկարնրանց ճրագը վառ մնաց: «Հիմա հարկաւոր է ճրագը հանգցնել»... ասաց Միսայէլ-բէկը:—«Այո, ժամանակն է»... պատասխանեց նրա փեսան: Այդ ինքն ըստ ինքեան անմեղ խօսակցութիւնը դրաւեց մելիքի սպասաւորներից մէկի ուշադրութիւնը և նա սկսեց ծածուկ լրտեսել խօսակցութեան շարունակութիւնը, որից նկատեց, որ հիւրերը ինչ որ չար դիտաւորութիւն ունեն: Նա իսկոյն իմացում տուեց մելիքի կնոջը, որը հրամայեց ծառաներին գաղտնի տակել իր ամուսնի բնակարանի մօտ և սպասել հետևանքին: Եւ իրաւ, գիշերից բաւական անցած, նրանք նկատեցին, որ հիւրերը մօտեցան մելիքի բնակարանին և փորձում էին ներս մտնել: Երկուսին ևս կալանաւորեցին:

Միւս օրը Մելիք-Մէջլումը քննելով այն դրդիչ պատճառները, որոնցից հրապուրված իր հիւրերը կամենում էին սպանել իրան, հրամայեց թէ Միսայէլ-բէկին և թէ նրա փեսայ Ցակոբ իւզբաշուն, երկուսին էլ հրացանի բռնեցին: Մելիքը այն աստիճան զայրացած էր, որ հրամայեց նրանց ամբողջ ընտանիքը բնաջինջ անել, բայց Միսայէլ-բէկի փոքր եղբայր Ռուստամ-բէկը առեց նրանց և փախաւ Շուշի բերդը Իբրահիմ-խանի մօտ:

Այդ անցքը ոչ միայն ներքին երկպառակութիւնների պատճառ դարձաւ, այլ յիշեալ Ռուստամ-բէկը, Իբրահիմ-խանի ձեռքում գործիք դառնալով, շատ չարիքներ գործեց Մելիք-Մէջլումի դէմ: Այդ կը տեսնենք մեր պատմութեան շարունակութեան մէջ, բայց այժմ այսքանը պէտք է յիշել, որ Ռուստամ-բէկը մի նշանաւոր մարդու, Ապրէս աղայի փեսան էր *): Իր աներոջ հետ կազմեց նա մի զօրեղ կուսակցութիւն ոչ միայն Մելիք-Մէջլումի դէմ, այլ և բոլոր այն մելիքների դէմ, որոնք դաշնակից էին Մելիք-Մէջլումին, որպէս էին՝ Գիւլիստանի Մելիք-Բէգլարեանները և Տիզակի Մելիք-Աւանեանները:

Եւ այդպէս, թէև Իբրահիմ-խանին չը յաջողվեցաւ Մելիք-Մէջլումին սպանել տալ և Ջրաբերդում ստեղծել մի նոր մելիքութիւն իր հովանաւորութեան ներքոյ, այսու ամենայնիւ, նա հասաւ իր նպատակին: Նա կարողացաւ կազմել մի նոր և հակառակ կուսակցութիւն, որի մէջ կար և կաթողիկոս: Այսպիսով Ղարաբաղի մելիքները երկու հակառակ կուսակցութիւնների բաժանվեցան. մէկը, Մելիք-Շահնազարեանների կուսակցութիւնը, որին պատկանում էին խանին համակրողները և Երիցմանկանց վանքի կաթողիկոսները, միւսը, Մելիք-Մէջլումի և Մելիք-Բէգլարեանների կուսակցութիւնը, որոնք հակառակ էին խանին և միացած էին Գանձասարի վանքի կաթողիկոսի հետ:

(Կը շարունակվի)

---

*) Այդ Ցակոբ իւզբաշին (հարիւրապետը) յայտնի էր անունով թիւրի Ցակոբ, այսինքն աւազակ Ցակոբ. իր յատկանիշները բացատրվում են իր ստացած մականունով:

**) Այդ տեղը այժմ կոչվում է Մարաղայ, որովհետև բնակեցրած է 1828 թվի Պարսկաստանի Մարաղայ անունով քաղաքից բերված գաղթականներով:

*) Այդ Ապրէս աղան Կասապացի էր. նա ամուսնացած էր Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսի քրոջ հետ: Այդ ամուսնութիւնից ծնվեցաւ մի որդի Իսրայէլ անունով և մի աղջիկ Վարդ-խաթուն անունով: Իսրայէլը Երիցմանկանց վանքի կաթողիկոս դարձաւ, իսկ Վարդ-խաթունը ամուսնացաւ Ռուստամ-բէկի հետ:

կանութիւնը խնդրում է մոցնել վրաց լեզուի դասատուութեան պարտադիր լինելը պետական միջնակարգ դպրոցներում, զուգընթացաբար այդ լեզուի հետ պէտք է խնդրէր մոցնել և կովկասեան միւս կուլտուրական լեզուն, այն է հայոց լեզուն։ Սրան վրաց խմբագիրներից մէկը, որ ներկայ էր ժողովին, պատասխանեց. «ուրեմն դուք կը կամենայիք գուցէ որ օսերէն լեզուն էլ մոցնենք դպրոցներում։» Չէ կարելի չը զարմանալ մի խմբագրի վրա որ համեմատում է հայոց լեզուն որ այդքան մշակված է և այդքան հարուստ գրականութիւն ունի մի որ և է օսերէն, լեռնարնակների բարբառի հետ։ Երևի լեզուն ունի կուլտուրական յատկութիւններ, որ դրանով պարապել և հետաքրքրվել են բոլոր քաղաքակիրթ ազգերի գիտնականները։ Նոյն իսկ պարսկերէնը չունէր և չունի այդքան շատ պարապողներ Եւրոպայում, որքան հայերէնը։ Ցիշենք միայն մի քանի անուններ. Սէն-Մարտէն, Լանգլուա, Դիւլօրիէ, Պրիւդոմ, Կապելէտտի, Լընօրման, Նէյման, Միւլլէր, Պետերման, Լաուէր, Հիցիկ, Հիւբշման, Ցիմմէր, Զախաու, և շատ ուրիշներ։ Բայց որ գիտնականի ուշադրութիւն իր վրա դարձրել է օսերէն գաւառական բարբառը։ Կարծում ենք որ ոչ թէ միայն օսերէն լեզուն դեռ ոչ ոքին մինչև այժմ չէ հետաքրքրել Եւրոպայում, բայց նոյնը կարելի է ասել և կովկասեան բոլոր միւս լեզուների մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

„Polit. Corresp.“ լրագրին գրում են Կայիրէից մայիսի 16-ից։ Անգլօ-Ֆրանսիական նաւատորմը Ալէքսանդրիա ուղարկելու մասին ստացած լուրը եգիպտական կառավարչական շրջանների և զինուորական կուսակցութեան վրա շատ վատ ազդեցութեան գործեց։ Մինչև այդ ժամանակ ամենքը վախենում էին Արաբի-փաշայից և զինուորական կուսակցութիւնը բոլոր միջոցները գործ էր դնում իր կողմը դարձնելու անուանիների ժողովը, որի անդամների մեծամասնութիւնը խեդիվին էր պաշտպանում, բայց յանկարծ ստացվեցաւ այդ հեռագիրը։ Անուանիներից մի քանիսը իսկոյն այցելեցին մինիստրներին, որպէս զի համոզեն նրանց հպատակվել խեդիվին, որովհետև դա միակ միջոցն էր պետութիւնների միջամտութեան առաջն առնելու համար։ Մինիստրները անյապաղ համաձայնվեցան։ Բայց շատ դժուարութեամբ նրանց աջողվեցաւ համոզել Տեվֆիկ-փաշային, որ նա թոյլ տայ մինիստրներին հնազանդութիւն յայտնել, որովհետև մինչև այդ ժամանակ խեդիվը հրաժարվում էր մինիստրների հետ որ և է յարաբերութիւն ունենալ։ Տեվֆիկ-փաշայի համաձայնութիւնը ստանալուց յետոյ մինիստրները ներկայացան նրան և ներումն խնդրեցին, համբուրելով նրա ձեռքերը և հագուստը։ Արտաքին ձևով հաշտութիւնը կայացաւ, բայց ամենքը հաւատացած էին, որ խեդիվը անկարող կը լինի այդ մինիստրութեան օգնութեամբ երկիրը կառավարել և սկսեցին խօսել մինիստրութեան հրաժարականի մասին։

Փարիզից „Polit. Corresp.“ լրագրին գրում են մայիսի 17-ից։ Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները շատ բաւական են այն ընթացքով, որ ստացան եգիպտական գործերը։ Խեդիվի կողմից մեծ թուլութիւն էր, որ նա ներեց իր մինիստրութեան հակասահմանադրական ընդդիմադրութեանը և չը ստիպեց նրան անյապաղ հրաժարվել կառավարութենից։ Խեդիվի և նրա մինիստրի հաշտութիւնը քաղաքական նշանակութիւն չունի։ Տեվֆիկ-փաշայի հեղինակութիւնը ստորացաւ, որովհետև նա անկարող եղաւ պաշտպանել երկիրը քաղաքական և կառավարչական անիշխանութենից։ Եգիպտական մինիստրութիւնն էլ կորցրեց իր նշանակութիւնը մինչև անգամ զօրքերի առաջ, որովհետև նա իր այժմեան գոյութեամբ պարտական է նախկին ընդդիմադրութենից հրաժարվելուն։ Խեդիվը հեռևեց անուանիների ժողովի նախագահ Սուլթան-փաշայի խորհուրդներին, որ համաձայնվեց հաշտվել մինիստրութեան հետ։ Ամենքը գիտեն, որ այդ հաշտութիւնը երկարատև չէ։ Ֆրանսիական և անգլիական նաւատորմները կը մնան եգիպտական ջրերի մէջ այնքան ժամանակ, որքան այդ նրանց հարկաւոր կը լինի։ Երկու պետութիւններն էլ զգուշութեամբ կը հսկեն քաղաքական անցքերի վրա Եգիպտոսի մէջ։ Երկու պետութիւններն էլ կը պահանջեն, որ փոփոխվի օրգանական կանոնագրութեան 34-դ յօդուածը։ Դա վերաբերում է անուանիների ժողովի իրաւունքներին՝ ֆինանսների վրա հսկելու մասին։

Անգլիան և Ֆրանսիան պատասխանեցին Բ. Դրանը մի շրջաբերականով, որի մէջ ասված է, թէ այդ պետութիւնները, իրանց նաւատորմները Ալէքսանդրիա ուղարկելով, բոլորովին մտադիր չեն եղել իրանց զօրքերը ափ իջեցնել կամ գրաւել Եգիպտոսը, որ նրանց նաւատորմները յետ կը կանչվեն, հէնց որ Եգիպտոսի մէջ կարգապահութիւնը կը վերականգնվի և որ, եթէ հարցի խաղաղ ճանապարհով լուծելը անկարելի կը լինի, Ֆրանսիան և Անգլիան եւրոպական միւս կառավարութիւնների և Բ. Դրան հետ համաձայնութիւն կը կայացնեն ապագայում գործադրելի միջոցների մասին։

Կայիրէի մէջ կատարեալ անիշխանութիւն է տիրում, գրում է „Голосъ“։ Բոլոր լուրերը Արաբի-փաշայի ազդեցութեան կորցնելու մասին եգիպտական գործերի վրա սխալ յայտնվեցան։ Հէնց որ խեդիվը դրական միջոցներ գործադրեց ապստամբ մինիստրութիւնը հրաժարացնելու համար, Արաբի-փաշայի վաղուց պատրաստված ապստամբութիւնը բացարձակ սկսվեցաւ։ Երբ եգիպտական խեդիվը, իր պալատը հրաւիրելով զինուորական, քաղաքային և հոգևոր աստիճանաւորներին, մի եռանդոտ ճառով յայտնեց նրանց, թէ ինքն է ընդունում եգիպտական զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնը և թէ մտադիր է այդ զօրքերի մէջ խիստ կարգապահութիւն մտցնել, ներկայ եղող գեներալները և օֆիցերները յանդգնութեամբ յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ Արաբի-փաշային հրաժարացնելը։ Նոյն պատասխանը տուին հեռագրով Ալէքսանդրիայի մէջ գտնված եգիպտական զօրքերի օֆիցերները, որոնք աւելի էլ յանդուգն գտնվեցան, յայտնելով, թէ այժմեան մինիստրութեանը նորից իշխանութիւն տալու համար նրանք խեդիվին 12 ժամ ժամանակ են տալիս։

Այդ լսելից զինուորականները սկսեցին բացարձակ ճնշում գործել քաղաքական և հոգևոր իշխանութեան վրա։ Մերկացրած զէնքերով սպառնալով, ապստամբ օֆիցերները ստիպեցին ուլեմներին և քաղաքային աստիճանաւորներին Արաբի-փաշայի կողմն անցնել։ Անուանիների ժողովն էլ այդպիսի սպառնալիքների ազդեցութեան տակ սկսեց նոյնպէս ընդդիմադրել խեդիվին։ Բոլոր ուլեմները, անուանիների ժողովի անդամները, արաբական շէյխները, ուսումնարանների և առևտրականների պատգամաւորները ներկայացան խեդիվին և խնդրեցին Արաբի-փաշային նորից պատերազմական մինիստր նշանակել, աւելացնելով, թէ հակառակ դէպքում զօրքերը մտադիր են ապստամբվել։ Այսպիսի բացարձակ ցոյցերին խեդիվ զիջումն արաւ և Արաբի-փաշա նորից մինիստր նշանակվեցաւ։

Գործի այդպիսի վախճանը Լօնդօնի մէջ նրանով են մեկնում, որ Բ. Դուռը երկդիմի դեր է կատարում։ Թիւրքաց կառավարութիւնը մի կողմից համաձայն էր խեդիվի հետ, որի կարծիքով անգլօ-ֆրանսիական միջամտութիւնը անհրաժեշտ էր, միւս կողմից նա քաջալերում էր եգիպտական զօրքերի ինքնակամութիւնը, կամենալով թիւրքաց զօրքերի միջամտութիւնը անհրաժեշտ դարձնել։ Լուրեր են տարածված, որ Անգլիան և Ֆրանսիան, համոզվելով, թէ թիւրքաց կառավարութիւնը երկդիմի է գործում, արդէն պահանջել են Բ. Դռնից, որ նա սպիպէ եգիպտական զօրքերին անյապաղ հպատակվել խեդիվի իշխանութեանը, սպառնալով, որ հակառակ դէպքում նրանք զինաւորված միջամտութիւն կը գործեն։

Կասկածելի է այդ սպառնալիքի իրագործումը, որովհետև Ֆրանսիական և անգլիական նաւատորմների վրա բաւականաչափ զօրքեր չը կան։ Այդ նաւատորմները 'ի հարկէ կարող են ռմբակոծել Ալէքսանդրիա, բայց կայիրէ նրանց անմատչելի է։ Մի և նոյն ժամանակ կայիրն է կենտրոնը այն ապստամբութեան, որին առաջնորդում է Արաբի-փաշա։

Թիւրքաց միջամտութիւնը եգիպտական գործերին անհրաժեշտ է դառնում։ Խեդիվը արդէն հեռագիր ստացաւ թէ Բ. Դուռը ուղարկում է Եգիպտոս սուլթանի գործակատարներին։ Միայն այդ գործակատարները ի հարկէ ոչինչ չեն՝ կարողանայ անել։ Նրանց հեղինակութիւնը պահպանելու համար զօրքեր են հարկաւոր և այդ գործի համար կօգտվեն Սիրիա ուղարկված զօրքերից։ Թիւրքաց կառավարութիւնը հասաւ իր նպատակին։ Նա զանազան խորամանկութիւններով անհրաժեշտ դարձրեց Եգիպտոսի գրաւելը թիւրքաց զօրքերով և երևի մի քանի օրից յետոյ այդ գործը կատարված իրողութիւն կը լինի։

Այդ գրաւման հետևանքները կախված կը լինի այն պայմաններից, որոնց հիման վրա պետութիւնները նորերում համաձայնութիւն կայացրին եգիպտական հարցի վերաբերութեամբ։ Գործը այնպիսի ընթացք է ստացել, որ միայն պետութիւնների կատարեալ համաձայնութիւնը կարող է խանդարել Եգիպտոսին թիւրքիայի հասարակ նահանգ դառնալ, իսկ այս վերջին դէպքում անկարելի կը լինի եւրոպական պետութիւնների հսկողութիւնը եգիպտական գործերի վրա և եւրոպական շահերի պաշտպանութիւնը։ Այսպիսի վախճանի առաջն առնելը դեռ կարելի է, բայց ոչ ուրիշ կերպ, եթէ ոչ եւրոպական կառավարութիւնների կատարեալ համաձայնութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Русск. Курьеръ» լրագիրը հաղորդում է որ ռուսաց կառավարութիւնը յայտնել է չինական կառավարութեանը թէ չինացիները շատ վատ են վարվում Կուլջայի բնակիչների հետ, նրանց ճնշում ու հարստահարում են։ Չինացիների այդ տեսակ վարմունք կարող է ծնեցնել խռովութիւններ Կուլջայի տեղական ազգաբնակութեան մէջ։

—«France» լրագրին Բերլինից հեռագրում են, որ Բերլինի պաշտօնական օրգանները աստրոունգարական դեպքն Բէյստի հրաժարականի առիթով խօսելով, նրա յաջորդին խորհուրդ են տալիս դիպլոմատական խաղաղ դեր խաղալ։

—«France» լրագրին Բերլինից հեռագրում են, որ գերմանական կառավարութիւնը խորհուրդ է տալիս Վիէննայի, Պետերբուրգի և Հռոմի կաբինետներին ոչինչ չը պատասխանել անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների նոր յայտագրին։

Գլադստոնին համայնքների ժողովի 47 ազատամիտ անդամներից ստորագրված մի գրութիւն ներկայացրին, որի մէջ նրանք պնդում են, որ անհրաժեշտ է ստիպողական բիլլի ժամանակամիջոցը կրճատել, նոյնպէս փոփոխել հասարակական միտինգներին, մամուլին և այլն վերաբերեալ վճիռները։ Լրագիրը աւելացնում է, որ կառավարութիւնը համամիտ է ազատամիտ հռետորների առաջարկած մի քանի փոփոխութիւններն ընդունել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օտարոտի անձնասպանութեան փորձ։ Փարիզի լրագիրների խօսքերով այս օրերս ոստիկանները նկատեցին երկու զեղեցիկ և զարդարված մատաղահաս աղջիկներին, ինչպէս երևում էր քոյրերին, որոնք շատով գնում էին գետեզրի ճանապարհով, դիմելով դէպի ներքև՝ Սէն-Մարտէնի ջրանցքը։ Օրիորդներից մէկը ջուրը ընկաւ, բայց նրա ետևից թռաւ նոյն տեղը և ոստիկանը, որը հեշտութեամբ ազատեց թշուառուհուն։ Միւս քրոջը, ի հարկէ, նոյնպէս արգելեցին կատարել իր դիտաւորութիւնը։ Կօմիսէրի հարցափորձին նրանք պատասխանեցին, որ երկուսն էլ սիրում էին մէկ երիտասարդին, և միմեանց դէմ ունեցած նախանձին վերջ դնելու համար վճռեցին անձնասպանութիւն գործել։ Այդ օրիորդները լաւ ընտանիքից են։

* * *

Ամերիկական բոմանտիզմ։ Վիէննայի «Presse» լրագիրը ամերիկական աղբիւրներից հաղորդում է հետևեալ հետաքրքիր փաստի մասին։ Քառասուն և ութ տարի առաջ մէկ ազքատ երիտասարդ Կէնտուկկիում, Ջոնս Սաունդէրս, սիրահարվեց մի երիտասարդ օրիորդի վրա, որը պատասխանում էր փոխադարձ սիրով։ Բայց օրիորդի հայրը հարուստ մարդ լինելով, անողորմաբար մերժեց փեսայացուի առաջարկութիւնը, յայտնելով նրան, որ իր աղջկայ ձեռքը միայն այն մարդու կը տայ, որ գտնէ մէկ միլիոն դօլլար կունենայ։ «Լաւ, պատասխանեց փեսայացուն, ես վաղը դէպի Արևմուտք կերթամ, և երդվում եմ ձեզ, որ կը վերադառնամ ձեր աղջկայ ձեռքը պահանջելու միայն այն ժամանակ, երբ մէկ միլիոն կաչխատեմ։» Հարուստ մարդը, շատ կարելի է, լսելով այդ խօսքերը, այն համոզմունքի հասաւ, որ Սաունդէրս աւելի յոյս ունի իր մահի քան մէկ միլիոն ձեռք բերելու վրա։ Բայց երիտասարդ մարդը իրան նպատակ դրեց—չը պակվել իր սիրահարի հետ, մինչև որ մէկ միլիոն չի ունենայ, իսկ աղջկայ հաւատարմութեան մասին կասկած չունէր։ Երիտասարդ սիրահարները սրբաչարժ կերպով մնաք բարեաւ ասեցին միմեանց և բաժանվեցան։ Աւաղ, միլիոնը հեշտ չէ ձեռք բերվում. քառասուն և ութ տարի փող էր զիզում Սաունդէրս, հարուստ խաշնարած լինելով Մօնտանում։ Նորերումս նա 68 տարեկան դարձաւ, և նրա կարողութիւնը արդէն մէկ միլիոնի հասաւ։ Նա Կէնտուկկի վերադարձաւ և պակվեց իր 64 ամեայ սիրուհու հետ, որը, չը նայելով իր հարստութեանը և այն հանգամանքին, որ մի ժամանակ բազմաթիւ անձինք խնդրում էին նրա ձեռքը, համարեա կէս դար հաւատարիմ մնաց իր փեսայացուին։

* * *

Գետնի գարեջուր։ Ամերիկական լրագիրները պատմում են հետևեալ հետաքրքիր անցքի մասին, որ պատահեցաւ Միացեալ—Նահանգների նաւթի շրջանում գտնված Ֆրանկլին քաղաքում։ Առուակի ափին գտնվում էր մէկ բլրակ. այդ բլրակը ծակելու ժամանակ, դուռն նաւթի մեծ քանակութիւն։ «Բիալ և որդի» առևտրական տունը գտաւ այնտեղ մանաւանդ նաւթի հարուստ աղբիւրներ և մեծ փող վաստակեց, մինչև որ նաւթի պաշարը հատաւ։ Չը նայելով դրան, առևտրական տունը հրամայեց բանւորներին բլրակը աւելի խորը ծակել։ Բանւորները սկսեցին բանել, դուռն նաւթ, և երբ պոմպը բերեցին, բղխեց թանգագին հեղուկի անվերջանալի հոսանքը։ Բայց բոլոր բանւորները զարմացած կանգնած էին. հեղուկը նաւթի ոչ գոյնն ունէր և ոչ հոտը և չէր այրվում։ Մէկ համարձակ բանւոր վստահացաւ համը տեսնել այդ հեղուկի մասին որ և է հակացութիւն կազմելու համար։ Մի քանի կաթիլներ բերանը առնելով, նա մեծ բաւականութեամբ կուլ տուեց, և ասելով, որ հեղուկը հարկաւոր է աւելի լաւ հետազօտել, խողովակի ծայրը բերանը դր-

բեց և սկսեց այնպիսի եռանդով կուլ տալ աղբիւրի նոր բերքը, որ ընկերները ստիպված էին հեռացնել նրան խողովակից, որ նա չը վնասի իրան: Հետաքրքրութիւնը նրանց ևս ստիպեց հետևել նրա օրինակին և հետևանքը այն եղաւ, որ մէկ ժամից յետոյ բոլորը ձգված ընկած էին գետնի վրա: Բոլոր շրջակայքում լուր տարածվեցաւ, թէ «Ռիալ և որդու» նոր նաւթային աղբիւրի մօտ մէկ անսովոր բան է կատարվում: Ամենքը վազեցին այնտեղ, զարմանալի նաւթի համը առնելու համար, և շատով նորեկները կորցնում էին լեզուն շարժելու ընդունակութիւնը, ոտների վրա չէին կարողանում կանգնել, նրանք ուժաթափվում էին և ընկնում ձգվում էին գետնի վրա: Վերջապէս եկաւ Ռիալ և իր կառավարիչը և երկուսն ևս շատ զարմացան այդ տեսարանի վրա: Իսկոյն պ. Ռիալ ուղարկեց զարեջուր չխմող Գրօսմանին կանչելու այդ դէպքի առիթով խորհրդակցելու համար: Եկաւ զարեջուր պատրաստողը, համը տեսաւ և սարսափով բացականչեց. «Ատուած իմ, այդ զարեջուրը իմ զարեջուրն է: Դուք փորելով հասել էք իմ ներքնատանը»: Մնացած հետախուզութիւնները ցոյց տուին, որ զարեջուր պատրաստողը ճշմարիտ էր. ներքնատունը քնվեցաւ և 2,000 վեդրանոց ամենամեծ տակառը համարեա դատարկված գտան: Նաւթի հաղուագիւտ տեսակի գործածողները քիչ քիչ ուշքի եկան և այժմ շատ բանուորներ ցանկանում են, որ ճակատագիրը չուտ չուտ հանդիպեցնէ դրա նման դէպքերին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի: Թագաւոր կայսրը պրուսական նորածին իշխանի կընքահայր է հրաւիրված: Սերգէյ Ալէքսանդրովիչ ուղևորվում է Բերլին իբրև Նորին Մեծութեան ներկայացուցիչ կնունքի ժամանակ: Խարկով-Նիկոլայեվի երկաթուղու Նովի Բուգ կայարանի մօտ կուդրեավցեվի կալուածքում յունիսի 15-ից մինչև յուլիսի 1-ը ոչխարների վրա Սիբիրեան ախտը պատուաստելու փորձեր կը կատարվեն Պասաերի եղանակով: Ոչխարապանները հրաւիրվում են ներկայ գտնվել: Ֆինանսների մինիստրը մերժեց Խարկովի զեմստվոյի խնդիրքը ածուխի մաքսահարկը փոքրացնելու մասին: Լուր է տարածված, որ աշունքին պետական խորհուրդը կը վերաքննէ տպագրական օրէնքները: Վերաքննվում են անհարազատ զաւակների մասին օրէնքները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 91 ր., չորրորդ 90 ր. 37 կ., հինգերորդ 90 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 213 ր. 50 կ., երկրորդ 207 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 88 ր. 87½ կ., երկրորդ 88 ր. 87½ կ., երրորդ 88 ր. 87 կ., ոսկի 8 ր. 12½ կ.: Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 25 պֆ., փարիզի վրա արժէ 254 ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը հանդիստ է:

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ՂԶԼԱՐ, 28 մայիսի: Տերեկ գետը տեղ տեղ պատռեց թումբը: Քաղաքին և այգիներին մեծ վտանգ է սպառնում:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել սրելու և քարէ աշխատանքները հրդեհաշէջ բաժնի սայլերի պահեստի և ախոռատների: Աճուրդի համար պէտք է ներկայանալ քաղաքային վարչութեանը երեքշաբթի յունիսի 1-ին առաւօտեան 12 ժամին: Հաշիւը, նախագիծը և պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ:

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ բարձրագոյն հաստատված քաղաքային կանոնագրութեան 17 և 22 յօդուածների և Դումայի որոշման հիման վրա հրաւիրում է պ. պ. տանտէրերին, որոնք ցանկանում են մասնակցել ապագայ քաղաքային ընտրութիւններին, ներկայացնել վարչութեանը անպատճառ մինչև յուլիսի 1-ը նրանց կայքերի վրա եղած գնահատողական բոլոր ապառիկները: Վարչութիւնը աւելացնում է, որ այն անձինք, որոնք մինչև այդ ժամանակ չեն ներկայացնի բոլոր ապառիկները, կը հանվեն ընտրողական ցուցակներից:

1—3

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ Զ. դասատան աշակերտներից մէկը կամենում է պատրաստել ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ բոլոր հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար: Կարելի է հարցնել նոյն դպրոցի տեսչի օգնական Պ. Ամիրան Մանդինեանից մինչև յունիսի 7-ը:

2—5

Մամուլի տակից դուրս եկաւ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ հրատարակութիւնների VII համարը „ԴԸԼԸՑԷ ԿՆԱՆՈՑ ՊԷՆԸ-ՓԵՇԱԿԸ“ հեղ. կոստանդին Մէլիք-Շահնազարեանի: Գրքոյկը Ղարաբաղի բարբառով է և այնտեղի կանանց կեանքից մի պատկեր է ներկայացնում:

Գինը 15 կ. է

Հասցէ՝ Тифлисъ. Ред. „Мегу“ Тиграну Назарьянцъ

2—6

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ Հայոց Ծխական ուսումնարաններում:

Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Իգմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետաց եկեղ. տղ. և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլաբ. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին: Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց:

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ որ աւարտել է Թիֆլիսի ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ինստիտուտի ուսման ընթացքը, ցանկանում է Թիֆլիսի Հայոց ուսումնարաններում ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ունենալ: Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատան մէջ:

9—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ Թիֆլիսի քաղաքային Դումայի նկատի առնելով ապագայ քաղաքային ընտրութիւնները 1883—1886 թ. քառամեակը, որոշեց. 1) պատրաստել ընտրողական ցուցակները մինչև ներկայ տարվայ յուլիսի 1-ը, 2) ընդհանուր անբաժան կայքերի տերերին իրաւունք տալ յայտնել վարչութեանը մինչև յուլիսի 1-ը իրանց մասնակցութեան մասին ընդհանուր կայքին, ցոյց տալով իրանց բաժինը: Եթէ այդ յայտնութիւնը չի լինի վարչութիւնը իրաւունք կունենայ տուրքը հաւասար բաժանել, եթէ կայքի տերերի թիւը յայտնի է: 3) Ընտրողների հաւատարմատարներին և անչափահաս ընտրողների հոգաբարձուներին իրաւունք տալ ընտրութիւններից 7 օր առաջ ներկայացնել քաղաքագլխին՝ առաջինները հաւատարմագրեր յայտնի դրոշմաւոր թղթի վրա (ներքին գործերի մինիստրի շրջաբերական 1876 թ. նոյեմբ. 26 № 107661, նոտարիուսից վաւերացրած, եթէ նրանց յանձնարարողների ստորագրութիւնները յայտնի չեն վարչութեանը, իսկ վերջինները (հոգաբարձուները) ներկայացնում են հոգաբարձական հիմնարկութիւնների վկայականներ իրանց հաստատման մասին: Ինչպէս հաւատարմատարներին նոյնպէս հոգաբարձուներին մտցնել ընտրողական ցուցակները իրանց յանձնարարողների և անչափահասների հետ մի համարով, իսկ ընտրութիւնների օրը այդ անձանց անունները կախել ընտրողական դահլիճի մէջ: 4) Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակները իբրև աւելուած ուղարկել տեղական լրագիրների Թիֆլիսի բաժանորդներին և բացի այդ ցուցակները կախել Դումայի դահլիճի մէջ:

Քաղաքի բնակիչների բողոքները ընտրողական ցուցակների անկանոնութեան մասին ընդունել վարչութեան մէջ սեպտեմբերի 7-ից մինչև 21 և այնուհետև ցուցակները ներկայացնել Դումայի հաստատմանը: Քաղաքային վարչութիւնը պատիւ ունի յայտնել այս բոլորը, որպէս զի իր ժամանակին յայտնութիւններ ստանայ ընտրութիւնների ժամանակ ձայնի իրաւունք ունեցողներից:

1—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
ՕՐԻՈՐԴ ԽԻԶԱՆԵԱՆՑ

ՍՕԼՕԼԱԿՈՒՄ, Միրզոյեվների տուն, Քաղաքային Վարչութեան հանդէպ:

Ցանկացողները կարող են դիմել նրան ԱՄԵՆ ՕՐ, ժամը 2-ից, մինչև 5 ժամ երեկոյեան:

2—10

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ լինելու է կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան 11 ժամին, Արծրունու թատրոնում:

Ընդհանուր ժողովի պարապմանց առարկաները՝ 1) Խմբագրական մասնաժողովի զեկուցումը իր գործունէութեան մասին:

2) Տարեկան հաշուի հաստատելը:

3) Վարչութեան և խմբագրական մասնաժողովի առաջարկութիւնը կանոնագրութեան մի քանի յօդուածների փոփոխութեան մասին:

4) Վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, քարտուղարի, գանձապահի և մի անդամի ընտրութիւնը՝ պ. պ. Ա. Յովհաննիսեանի, Ն. Միրզոյեանի, Մ. Թաւադեանի, Ա. Քիշմիշեանի և տիկ. Կ. Եւանգուլեանի փոխարէն:

5) Խմբագրական մասնաժողովի հինգ անդամների ընտրութիւնը՝ օր. Ն. Տէր-Մարկոսեանի և պ. պ. Յ. Չիզիանեանի, Գ. Տէր-Աղէքսանդրեանի, Ա. Բաբայեանի և Ս. Պալասանեանի փոխարէն:

ա) Ընկերութեան կանոնագրութեան 33 յօդուածի զօրութեամբ ընդհանուր ժողովը կայացած է համարվում երբ ներկայ եղող անդամների թիւը Թիֆլիսում գտնուող անդամների թիւի ⅕-ից պակաս չէ:

բ) Փոփոխած կանոնագրութեան նախագիծը ընկերութեան անդամները կարող են նախապէս ստանալ պ. Ծատուրեանի խանութում (պալատի փողոց, տուն Ծովիանեանի):

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գալլերէում, № 144 ԾԱԽՎՈՒՄ է արժան գներով վիէննայի Տօնէտ Ֆաբրիկայի ամեն տեսակ ՄԵՕԲԵԼ, նոյնպէս Իտալիայի ՄԱՐՄԱՐԻՕՆ քարերը,

ՀԱՅԵԼԻՆԵՐԸ և ՇՐԶԱՆԱԿՆԵՐԸ:

49—60

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat
1. Weihburggasse 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Мая 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.